ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԼՈՒՍ

Գորշահեալ ջրին տակը լուսաւորելու և միանգամայն ձուկ որսալու համար.

Այս եղբի տարիներս, քաղաքմուտ բնագէտներն սկսան եղեքտրական լուսած լուսով ջրին տակը լուսաւորել։ Ովկիանոսի, Մանիգայիու Միջերկրական-ին վրայ սկսան այլ և այլ փորձեր ընել ապակեղէն անօթներով, որոնց մէջ երկու ածուխ վրայէ վրայ մէկը դրական և միւսը բացասական՝ եղեքտրական բիլայի[1] զօրութեամբ բռնկելով լոյս կը պատճառեն. աս լոյսը պատճառելու համար հարկաւոր եղած նիւթերը, փորձ ընող նաւուն վրայ են, և ջուրին մէջ ապակեայ անօթը միայն կ'ինջեցուի։ Քանի մը առիթներու մէջ այս փորձս ըստ բաւականին յաջող եղաւ թէ ծովուն տակը աշխատելու և թէ մանաւորապէս ձուկ որսալու համար, որովհետև ձկները միշտ դէպ 'ի լոյս կը վազեն։ Ի վերայ այսր ամենայնի աս ամեն դիւրութեանց քով այս նոր գիւտին գործադրութիւնը շատ սուղի կը նստի, և միանգամայն մեծ հոգի և ճարտարութեան կարօտ է։ Միւս կողմանէ եղեքտրականութենէ պատճառած լոյսը շատ ուժով և խայթիչ է, և նոյն իսկ նաւուն մէջի եղած բաներուն ալ շատ վնաս կրնար հանդիպելու նաւուն շարժմամբը, բիլային համար հարկաւոր եղած թթուտներուն թափելովը։

Ընդ հակառակն կան երբեմն այնպիսի պարագաներ՝ որ նուազագոյն լոյս մը բաւական կրնայ ըլլալու ու թերևս ընտրելագոյն ըլլայ։ Այս գիւտս ան ատեն օգտակար կրնար ըլլալու երբոր գործածութիւնը դիւրին ու միանգամայն քիչ ծախքով ըլլար. այնպէս որ աս գործիքը նաւէն կախուած ըլլալով հատ չուանով մը՝ ծովուն մէջ, ջրասոյզ արուեստաւորը ուղածին պէս ջրին տակը կարենայ շարժել զգործին ու իրեն պէտք եղած բաները ազատ համարձակ կարենայ վերջ տանիլ, մանաւանդ ձուկ որսալու համար։ Մտածեցի կ'ըսէ Պ. Պողոս ժէրվէ, որ գործիքս յաջողցունելու համար պէտք է գործածեմ կէյալէրի խողովակներն, նախ հաղորդելով զասոնք խնամքով անագէ թիթեղով պատած խողովակի մը, յետոյ բիլայէ մը ծագած եղեքտրական հոսանուտն հաղորդել վերոյիշեալ խողովակներուն, որով կը լուսաւորուին։

Այդ վերոյիշեալ ապակեղէն անօթը կը նմանի քառակուսի մտուկի և կամ պղնձէ փոքրիկ կաթսայի մը, որ չորս պզտիկ ոտքերու վրայ կեցած է. ասոր խուփը՝ որուն եզերքներն առաձգական խէժով շրջապատեալ են՝ ընդունարանին վրայ պտուտկելով կը դառնայ և ամուր կը հաստատուի։ Խուփին մէջտեղը կայ օղակ մը, ուսկից ամբողջ գործիքը կրնայ կախուիլ։ Աս ապակեղէն անօթին մէջ կայ երկու տեսակ տարը կրկնագրոմուռտ բոդասի[1] ամուր գոցած, որոնք պղնձէ տախտակներու մէջ ամուր հաստատուած են։

Եղեքտրական հոսանուտ զօրութեան բևեռները, կրնան ըստ կամս մէկը ճախարակին հետ հաղորդուիլ ու մէկալը խէժապատ թելերով կէյալէրեան խողովակին հետ։ Աս խողովակը մանաւոր ձև մը ունի, ու լի է ածխային թթուտով և հաստատուած է ամուր գոցուած ապակեայ գլանի մը մէջ, այս գլանն է ուրեմն որ կը լուսաւորուի։

Աս գործիքով եղած լոյսը շատ պայծառ ու միանգամայն զօրաւոր է, և շատ կը նմանի զինուորական արուեստին ու հիմակուան ատենս հանքերու մէջ գործածուած լուսոյն, ունի դարձեալ քիչ մը նմանութիւն փոսփորացող կենդանեաց լուսոյն, բայց այս տարբերութեամբ որ լապտերիս լոյսն աւելի հեռու կը թափանցէ. մանաւանդ բազմամեղր խորութեամբ ջրոյն խորը տես-

1 Pile.

1 Bichromate de potasse.

նուելու համար մի միայն կը ծառայէ. աս պատճառաւ ձուկ որսալու համար ալ շատ աղէկ յարմար է. որովհետև ձըկները բնականապէս դէպ 'ի լոյս կը վազեն որով դիւրաւ կ'որսացուին, նոյնպէս կրնայ ծառայել ծովուն խորութիւնը և ծանծաղուտ տեղուանքը զննելու համար ։

Պ. Տրվոլ՝ նաւապետ և միանգամայն հրամանատար Հարաւային Գաղղիոյ ծովափանցը՝ անցեալ սեպտեմբերի մէջ այս փորձիս ներկայ գտնուեցաւ որ եղաւ Սէդ նաւահանգստին դիմաց ։ Ինը ժամ ջրոյն մէջ ընկղմած մնաց աս ելեքտրալոյս լապտերը և վեց ժամի չափ անընդհատ վառեցաւ ։

Ուրիշ. օրագրի մը մէջ ալ կը կարդանք հետևեալ գիրս ։

Յայտնի է ամենուն որ Պ. Պալէն Անժեռի յետին արուեստահանդիսին մէջ ներկայացուցեր էր նոր տեսակ ջրասոյզ ելեքտրալապտեր մը, մասնաւորապէս ջրոյն մէջ խուզարկութիւն ընողներուն գործածութեանը համար, զոր արժան կը համարինք հոս բացայայտել ։ Թէպէտ մասնաւոր ուշադրութեան կարօտ է, բայց շատ կատարելութիւններ ու եզականութիւն ունի ։

Երևակայէ դիմացդ կրկին մէտր երկայնութեամբ երկու երկաթէ լայն սիւնաձև խողովակներ, որոնցմէ մէկը մէջտեղէն միւսին բերնին վրայ կպած է լատին T (դէ) տառին ձևովը ։ Ուղղահայեաց խողովակն սնամէջ և այնչափ լայն է՝ որ կրնայ իր մէջը մարդ մը մտնալ ու ազատ համարձակ շարժիլ ։ Իսկ վերի պառկած խողովակին մէջտեղը խոշոր ծակ մը բացուած է, որուն դիմացը զետեղած զօրաւոր ոսպնաձևը մէջի ելեքտրական լապտերին լուսաւորութիւնը բովանդակ կը ցոլացընէ ։

Այդ կրկին մեծ խողովակներն փոքրիկ առանձնական խէժէ խողովակներէ հաղորդակցութիւն ունին մէկմէկու, որոնց վախճանն է՝ ներքին խտացեալ օդը չարունակ փոփոխել օդական գործւոյն միջնորդութեամբ, և ուրիշ ելեքտրական թելով մ'ալ՝ նաւուն նշան տալ և առնել ։

Այս ահագնատեսիլ խուզարկու գործիքը՝ նաւուն մէկ կողմը հաստատուն երկաթէ թելերու վրայ կախուած է, և դիւրաւ վեր վար կը շարժի ։

Պ. Պալէնի ձեռնարկութիւնը իրաւցընէ յանդուգն փորձ մըն է, և ականատես անձանց վրայ զարմանք կը պատճառէ ։ Զի նմանիր ջրասոյզ մեքենային որ արագաշարժութեամբ վեր վար կ'իջնէ ու կ'ելլէ՝ ատէպ ատէպ մաքուր օդ ծծելու համար. այլ ընդհակառակն դանդաղաշարժ և ծանր է և դիմացկուն ։

Պ. Պալէն այդ նորահնար խուզարկու գործիքով կրնայ ծովուն մինչև ցայժմ չհամարձակուած անդունդներն իջնել ։ Իրաւցընէ շատ հետաքրքրական տեսարան պիտի ըլլայ ծովուն անբաւութեան մէջ տեսնելը ջրային շնչոց անթիւ տեսակներն ու անոնց կայտառելը ։ Նմանապէս յատակն գտնուած զանազան բոյսերն ու զարմանալիքն, այն ցուրտ լռութեան մէջ մարդուս վրայ սոսկում մը կը պատճառեն ։

Նոյն իսկ ձկանց ալ զարմացումն է տեսնելով այն նորատեսակ ծովային արեգակը՝ ծովուն մէջ ծագած, ինչպէս կ'ըսէ բանաստեղծ հեղինակ մը .

« Յարշաւեն իւր ընդ ջուրց կուտակս ,
Պշուն ձկունք ընդարմացեալք » ։

փորձով ստուգուած է որ ընդհանրապէս ձկունք լոյսը կ'ախորժին, և փայլակի պէս կը սրանան ու կը վազվզեն . և որովհետև իրենք քան զցամաքային չորքոտանիս աւելի վախկոտ ըլլալով՝ ջուրի ոչինչ շարժմունքէ մը կը խրտին և կը փախչին և դժուարաւ կ'որսացուին, ուստի որսը դիւրացընելու և այդ շարժմունքը չպատճառելու համար Պ. Պալէն կը մտածէր և անհանգիստ էր, վերջապէս երկու գիշեր անհանգիստ ըլլալէն ու աս նիւթիս վերաբերեալ երազներ տեսնելէն ետքը, երրորդ առաւօտը Արքիմեդեսի հանճարովն արթըն-